ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3301-Ա « 02 » հուլիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի Հ.3321-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ին կետով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 01.07.2026թ. հ.20-Ել-114572 եզրակացությունը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի ապրիլի 23-ի «Երևանի քաղաքապետի 2005 թվականի հուլիսի 12-ի հ.1506-Ա որոշման հ.15-րդ կետը չեղյալ ճանաչելու, Շահումյան 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի հ.4 բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Գոհար Սուրիկի Պանդեյանի, Ավետիք Սուրիկի Պանդեյանի գույքային իրավունքները վերականգնելու, 297.12քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.3321-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման նախաբանում և 2.1. կետում «1437.12» թիվը փոխարինել «1374.27» թվով,

2) Որոշման նախաբանում, 2-րդ կետում «597.12» թիվը փոխարինել «534.27» թվով,

3) Որոշման վերնագրում, նախաբանում, 3-րդ կետում «297.12» թիվը փոխարինել «234.27» թվով:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշի-նության վարչության պետի վրա:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ